# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Գ. Լուսավորչի փ., 12,
հեռ՝ (0264) 2-34-23, էլ. փոստ՝ gavari.hamaynqapetaran@gmail.com

N Ս-4142
*28.10.2024թ.*

«ՖՌԱՆԿՈ ՍՈՒՋԻ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
Լ. ՍՈՒՋՅԱՆԻՆ

(ք. Արթիկ, sujyanhamlet@gmail.ru , հեռ.՝ +374930448)

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

### Պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին

Գավառի համայնքապետարանի և «ՖՌԱՆԿՈ ՍՈՒՋԻ» ՍՊԸ–ի /այսուհետ՝ Ընկերություն/ միջև 17.09.2024թ. կնքվել է ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/33-1 ծածկագրով Գավառի համայնքապետարանի կարիքների համար ապրանքի մատակարարման գնման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ, նույն ընթացակարգի հրավերով սահմանված, պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը /այսուհետ՝ ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Ընկերության կողմից չի մատակարարվել պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրով պահանջված N1/դյուրակիր համակարգիչներ/ չափաբաժնով նշված ապրանքը, որի մատակարարման ժամկետներ էր սահմանված պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրը՝ սույն թվականի հոկտեմբերի 11-ը ներառյալ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ /կետանցով, ապրանքների,

Ընդ որում, եթե՝

սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

**Համայնքի ղեկավար՝ Գուրգեն Մարտիրոսյան**

*Կատ. Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ՝*
*Մ. Սովսիսյան*